



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Epimelichy

Amelichy

Amelichy

85
5-76




85

E-76

ԱՍՏՆԱՍՊՈՐՏ

ՄԱՆԿԱՆՑ



Յ

ԵՐԱՆԵԱԿ



THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

1911



85
6-76

110 NOV 20

Ե Ր Ա Ն Ե Ա Կ

ԱՆՈՒՆՈՎ,

ԹԱՆԿՈՅԻ ԹԱԳՈՒՀԻՈՅՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը



Վ Ե Ն Ե Տ Ի Կ
 Ս Ո Ւ Ր Բ Ղ Ա Ջ Ս Բ
 1859

52 - 55112

02.12.2013

102

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԼԻՈՏԵԿԱ
 ՀԱՍՏԱՏՎԱԾՆԵՐԻ ԱՐԽԻՎ
 Կ. Մ. Ա. ՄԻՍԿԻՆԻ
 ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

64122-67



Ե Ր Ա Ն Ե Ա Կ

ԱՆՈՒՆՈՎ

ԹԱՆԿՈՅԻ ԹԱԳՈՒՀԻՆ



Ա.

Թագուհին ու իր պաշտոնը :

Ասիային մէկ ծայրը ընդարձակ տէրութիւն մը կայ՝ որ ճարոն կ'ըսուի, ու շատ կղզիներէ ձևացած է. աս կղզիները դտան 1540ին մէկ քանի Բորդուգալցիք, որ փոթորիկով աս կողմերս քշուեր էին: Օղը առողջ ու բարեխառն է, բայց բիչ մը ցուրտ. հողը ընդհանրապէս աղէկ բանեցուցած է. իսկ բերքն է ոսկի, արծաթ, ցորեն, դարի,

բրինձ , չայ , և ուրիշ շատ ծառեր
ու բոյսեր որ մեր երկիրները չեն
գտնուիր . բնակիչներուն մեծանձ-
նութիւնն ալ խիստ անուանի է :

Աս երևելի երկիրը գտնուելէն
ետքը , քրիստոնեայ քարոզիչնե-
րուն սիրտը վառուեցաւ որ երթան
գանոնք կռապաշտութենէ քրիստո-
նէութիւն դարձրնեն :

Աս ընդարձակ տէրութեան գլխա-
ւորը՝ ինքնագլուխ թագաւոր մըն է ,
որ Քուալոյ կ'ըսուի : Իրմէ գատ Տայի-
րի անունով գլխաւոր մըն ալ կայ ,
որ միայն հաւատքի բաներուն կը
խառնուի : Քուրմերը Պոնց կ'ը-
սուին , ու ժողովրդեան առջևը մեծ
պատիւ ունին : Բայց Քրիստոսի
սուրբ եկեղեցին ամէն դժուարու-
թիւն սիրով յանձն առաւ , որ ա-
սանկ գեղեցիկ երկրի մը մէջէն
ալ կռապաշտութիւնը վերցընէ . ա-
սանկ բանի ձեռք դարնելը շատ դը-
ժուար ու վտանգաւոր է , բայց Աս-
տուծոյ շնորհքը ամէն բան կը դիւ-
րացընէ :

Ճարտնի կղզիներուն մէջ երևելի է Նիֆոն կղզին . ասոր իշխանն ալ թագաւոր կ'ըսուի , թէպէտ ինքն ալ մեծ թագաւորին հրամանին տակն է :

Քրիստոնէութիւնը տասներվեցերորդ դարուն մէջ սկսաւ ծաղկիլ աս կղզիիս մէջ . թագաւորը միշտ կուսալաչտ մնաց , բայց քրիստոնէից հաւատքին վրայ մեծ համարմունք ունէր , ու պատմութիւնը լսել կը սիրէր : Արովհետեւ ինքը բոլոր աշխարհքիս հարստութեամբը լեցուած էր , չէր հասկընար որ՝ քանի որ ճշմարտութիւնը չէ ճանչցած , ամենէն մեծ երջանկութենէն զուրկ է : Իրեն սրտին մեծ ուրախութեան պատճառն ալ իր թագուհին էր : Ասիկայ ամէն արտաքին ձիրքերը ունենալէն ետքը՝ անանկ աղէկ դատմունք , անանկ սուր յիշողութիւն , ու անանկ պարկեշտ վեհանձնութիւն մըն ալ ունէր , որ չէ թէ միայն թանկոյի , հապա նաև բոլոր աշխարհիս թագուհին կրնար

ըլլալ . ուստի իր հաղատակներն ալ
մեծ սէր ու համարմունք ունէին
վրան :

Աս անուանի թագուհին մինակ
կենալ շատ կը սիրէր , և որչափ
կրնար նէ՛ ժողովրդեան մէջ քիչ
կը տեսնուէր : Ատեն ատեն թագա-
ւորը դինքը մեծամեծ հանդէսներու
կը տանէր . երբեմն ալ իշխաննե-
րուն հետ տեսնուիլ կու տար . բայց
թագուհին աւելի կը սիրէր ելլալ իր
պարտէզներուն մէջ քիչ մը մինակ
պտըտիլ , ու բնութեան գեղեցկու-
թիւններուն վրայ դմայլիլ : Օր չէր
անցներ որ աղքատներուն ողորմու-
թիւն չիտար , ու իրեն հանդատու-
թենէն խեղճ մարդկանց ալ բաժին
չիհանէր :

Թագաւորը իր թագուհին ա-
ռանձնութիւնը դուարձալի ընելու
համար , իրեն պաշատը կարգէ
դուրս դարդարանքներով դարդա-
րեր էր . մէջի եղած հարստութիւնը
անպատմելի : Արիչ շատ բաներէն
ի դատ՝ մէջը կար մէկ գեղեցիկ

պատկերք մը , որուն վրայ քաջուած էր Նսոյ քաղաքը ու բոլոր ճաբոնի թագաւորին պալատը : Աս քաղաքը տասուերկու մզոն շրջապատունի : Գրսէն իրեք կարդ բերդի պէս շինած պատ ունի խրամներով . երրորդին մէջը կը նստի թագաւորը . ան ալ երկու պզտի ամուր բերդով պատած է . անոր ետեր փառաւոր պարտէզ է : Գանձատունը պալատին մէկ կողմն է պղնձէ ծածքով ու երկրթէ դռներով , որ կարենայ կրակի դէմ դնել : Իսկ Նսոյ քաղաքը թուրաւ զետին քովը շինած է , որ հինգ բերնով նաւահանգստին մէջ կը վազէ : Աս զետին վրայ կամուրջ մը կայ որ խիստ մեծաշէն է . և ասոր վրայէն կը չափեն ամէն տեղի հեռաւորութիւնը : Ա՛րսեն թէ աս պալատը ու քաղաքը մէկ քանի ամսուան մէջ շինուեր լմընցեր է . որով կ'իմացուի շինել տուող թագաւորին հարատուութիւնը :

Պատկերքին մէջ քաջուած կ'երևնար մէկ սիրուն դաշտ մը , որուն

մէջէն պզտի պզտի գետեր կ'անց-
նէին . բոլոր դաշտին երեսը տեսակ
տեսակ ծառերով զարդարած . դաշ-
տին մէջտեղն ալ իրեք բաժնուած
լեռ մը , որոնց գլուխը ինչուան ամ-
պերը կը հասնէր :

Լերան տակը մեծ լիճ մը կ'երև-
նար , մէջը լեցուն պզտի կղզիներ ,
ու հազարաւոր ձկներ : Աս լճէն ալ
գեղեցիկ գետ մը ելած՝ ծուռումուռ
վազուածքով կ'անցնէր կ'երթար
դէպ 'ի դուրս : Քաղաքը գետին
հանդարտ քալած տեղը շինած էր .
ամենէն քարձր լերան ծայրը կէս
կլոր ձևով կ'երևնար թագաւորա-
կան պալատը . մէկալ երկուքին վը-
րայ ալ ուրիշ իշխաններուն պա-
լատները կային :

Թագաւորին պալատը երթալու
համար պէտք էր մեծ ու լայն սան-
դուխէ մը ելլալ՝ որ լերան քարերը
փորելով շինած էր . իսկ լերան վը-
րայ արհեստով դաշտ մը ձևացու-
ցած ու պալատը հոն շինած էր .
պալատին ալ չորս դին յիսուն կան-

դուն բարձրութեամբ ամուր պատ
մը քաշած էր :

Պալատին ներսի փառաւորու-
թիւնն ալ զրահնէն վար չէր մնար :
Սանդուխները , սրահները , սե-
նեակները և ամէն զարդերը զար-
մանալի մեծազորութեամբ շինած
էին . բայց ամենէն աւելի աչքի զար-
նոզը բրգածն շէնքն էր եօթը կարգ
չինած՝ շինու ճարտարապետու-
թեամբ : Ամէն մէկ կարգը մէյմէկ
ծածք ունէր՝ մէյմէկ գոյն ներկած .
անանկ որ արևուն լոյսը շէնքին վը-
րայ զարկած ատենը՝ ծիրանի գօ-
տիի պէս կը փալփըլէր : Աս բուր-
դին վրայի ծայրը կապոյտ գունա-
մը կար ոսկեզօծ զարդերով զար-
դարած . անանկ կը փայլէր աս
գունտը՝ որ մարդ վրան հազիւ կըր-
նար նայիլ . բայց նայելով ալ չէր
կշտանար :

Աս պատկերքին վրայ շատ ան-
գամ թաղուհին կը նայէր ու կը
զմայլէր , և մտքովը երանի կու
տար ան պալատին մէջ բնակող

Թագուհին : Բայց բոլոր աս ունեցած հարստութիւնները թագուհին ազնիւ սիրտը չէին կրնար կշտացընել . կը տեսնար որ իր սիրտը ուրիշ բանի մըն ալ կը փափաքի , թէպէտ ինքն ալ չէր կրնար հասկըցընել՝ թէ որն է ան փափաքելի բանը : Ինքը այնչափ երջանիկ էր , ու անով ալ իր վիճակին վրայ գոհ չէր . ինչու որ յայտնի կը տեսնար թէ աս աշխարհքիս բարիքը՝ հարըստութիւնը մութի պէս կ'անցնին կ'երթան . մարդուս աչքը կը խաբեն , բայց սիրտը չեն կշտացընել : Այսչափ միայն աղէկ հասկըցեր էր՝ որ աշխարհքիս մէջ ամէն երջանկութենէն վեր է առաքինի ըլլալը , մոլութիւններէն ետ կենալը , և ուրիշներուն բարիք ընելը . ու բոլոր սրտանց աս բաներուս ետեւէն կ'ըլլար :

= 11 =

Բ

Փառաւոր դարձ :

Ան ատենները քրիստոնեայ քա-
րոզիչներուն ջանքը ու գերազանց
առաքինութիւնները սկսեց Էին բո-
լոր տէրութեան մէջ տարածուիլ ,
ու անոնց ըրած հրաշքներուն ճայ-
նը ինչուան թաղուհոյն աւանջը
հասաւ : Թաղաւորն ալ աս բաներս
ուրիշներէն լսելով կը զարմանար ,
ու շատ անգամ թաղուհոյն հետ
ան բաներուն վրայ կը խօսէր . կա-
մաց կամաց շատ մարդ քրիստո-
նեայ եղան , մանաւանդ հասարակ
ժողովրդէն : Թաղաւորը տեսաւ որ
թաղուհին մեծ համարմունք ունի
քրիստոնէից հաւատքին վրայ ,

բայց բանի տեղ չիղրաւ . որովհետեւ միտքը դրեր էր թէ անիկայ առանց իր հաւանութեանը բան չըներ :

Իսկ թագուհին քանի որ կը լսէր քարոզիչներուն աւետարանական քարոզութիւնը ու յայտնի հրաշքները , անդադար անոնց վրայ կը մտածէր , ու ինքնիրեն կ'ըսէր . « Մեր կուռքերը ամենեին հրաշք չեն գործեր , մեր պոնցերուն պատմածները սուտումուտ բաներ են ժողովուրդը խաբխրբելու համար հնարած . պէտք է մէկ ուրիշ Աստուած մը ըլլայ աս քարէ ու փայտէ կուռքերէն վեր , որուն բոլոր աշխարհք հնազանդին » :

Աս մտածմունքներով քիչ քիչ թագուհւոյն հոգւոյն աչուրները բացուեցան . սկսաւ ատեն ատեն ցաւազին սրտով աչքերը դէպ 'ի երկինք վերցընել ու հառաչելով ըսել . « Ո՛վ ստեղծող բոլոր աշխարհքիս , երկինք ու երկիր գրեց կը գովեն , և քու մեծութիւնդ ու

ամենակարողութիւնդ կը քարոզեն-
անհ, ես ինչո՞ւ դքեզ պիտի չիկա-
րենամ ճանչնալ : Ինծի սէս թա-
գուհիէ մը շատ աւելի երջանիկ է
ան աղքատ կիներ՝ որ քու պատուի-
րաններդ կը սորվի, ու քու սորվե-
ցուցած սքանչելի հաւատքիդ պատ-
մութիւնները կը լսէ : Նայէ, կ'ա-
ղաչեմ, իմ փափաքանացս, ո-
րով կը փափաքիմ ճշմարտութիւնը
ճանչնալու. ու դու հանէ մտքէս ան
ծուռ կարծիքները որ ունիմ կուռ-
քերուն վրայ : Իմացու ինծի քու ու՛
րլլալդ, որ կարենամ դքեզ պաշ-
տել : Գու քրիստոնէից հաւատքը
մեծամեծ հրաշքներով աշխարհքիս
չորս դին տարածեցիր, ըսել է թէ
ան է ճշմարիտ հաւատքը. վասն զի
դու ստութիւն չես կրնար սիրել.
ահա իմ փնտռածս ալ ճշմարտու-
թիւնն է, ու անոր համար կը հա-
լիմ կը մաշիմ՝ թէ երբ պիտի կա-
րենամ փափաքիս հասնիլ, ու աս
անդիտ դանձր ձեռք ձգել : Իրաւ
որ մարդս ինչ որ կրնայ ունենալ

աշխարհքիս մէջ ես ամէնն ալ ունիմ, բայց ամենեին բան մը չունեցածի պէս եմ. ուրեմն թէ որ քրիստոնեայ ըլլալովս՝ կրնամ աս փափաքիս հասնիլ, ողորմէ ինծի, ու մի գրկեր դիս աս շնորհքէն » : Աստուք կ'ըսէր ու սիրաբը ելած կուլար :

Աստուած իր անհուն ողորմութեամբը լսեց թագուհոյն աղաչանքը . անանկ շնորհքներ տուաւ իրեն, որ քրիստոնէ ըլլալու փափաքը քանի դնաց աւելցաւ : Բայց ամենէն աւելի յորդորուեցաւ ան դիպուածէն՝ որ թագաւորը բերնովը պատմեց իրեն :

Տասամ անունով երևելի իմաստուն մարդ մը կար, որ ճարտնի ու Չինու բոլոր դպրոցները մտեր ելեր էր, բոլոր տէրութեան մէջ անունը ելած էր . ամէն կողմերէն մարդիկ կու գային իրեն խորհուրդ հարցունելու . ինչուան թագաւորներն ու թագուհիներն իրենց պատիւ կը սեպէին՝ անոր հետ խօսակցութիւն ը-

ներք: Աստուծոյ նախախնամու-
 թիւնը այնպէս բերաւ, որ աս մար-
 դը քաղաքը դտուեցաւ. հոն քրիս-
 տոնեայ քարոզիչ մը կար, ուղեց
 Տոսամ անոր հետ խօսիլ. ու մար-
 դուն հողւոյն վրայ խօսք բացուե-
 ցաւ: Տոսամ սկսաւ ըսել թէ մար-
 դուս հողին անմարմին բան չէ,
 ուստի կրնայ մեռնիլ կամ փճանալ.
 ու աս ծուռ խօսքը հաստատելու
 համար մէկմէկէ ծուռ ու ծիծաղա-
 կան պատճառներ բերաւ: Քարոզի-
 չը մէկիկ մէկիկ Տոսամին բերած
 պատճառներուն դէմ դրաւ, ու վեր-
 ջը վերջը անանկ ըրաւ՝ որ ան իմաս-
 տուն կարծուածը սկսաւ տարակու-
 սիլ իր հաւատքին վրայ: Քարոզի-
 չը աս տեսնելուն պէս սիրտ ա-
 ռաւ, ու քրիստոնէութիւնը հա-
 մարձակ բացատրեց անոր, ու ան
 հեթանոս փիլիսոփային հողին վաս-
 տրկելու համար, զանազան բաներ
 հարցուց մէկմէկէ դժուար, անանկ
 որ՝ խելացի կարծուած մարդուն բե-
 րանը ամենին խօսք չիմնաց

64122.67


ԵՐԱՆԵԱԿ



Ասիկայ խելացի ու բարեսիրտ մարդ ըլլալուն շուտով համոզեցաւ քրիստոնէական հաւատքին ճշմարտութեանը, մէկզի դրաւ իր ծուռ հաւատքը, ճանչցաւ իրեն ճշմարիտ ստեղծողը, ու ետեւէ ինկաւ քրիստոնէութեան հարկաւոր բաները սորվելու: Քիչ ատենէն ետքը աշխարհքիս ամէն ունայնութիւնները մէկզի ձգեց մկրտուեցաւ, ու իրեն բարի վարքը օրինակ եղաւ նոր դարձող քրիստոնէներուն:

Մարդ չիկրնար պատմել թէ Տոսամին դառնալը որչափ մարդու փրկութեան պատճառ եղաւ. եօթը ութը հարիւր հոգի որ Տոսամին վարդապետութեանը հաւատացեր էին իրեն քրիստոնեայ ըլլալը տեսնելով, իրենք ալ Քրիստոսի դրօշակին տակը մտան: Անոնց պատճառովն ալ օր օրուան վրայ դարձողներն այնչափ շատցան՝ որ քրիստոնէից եկեղեցիները իրենց չէին բաւեր:

Աս բանիս ձայնը մէկէն տարա-



ծուեցաւ ամէն տեղ , ամէնքը կ'ըսէին թէ՛ « Տոսամին պէս երևելի իմաստուն մարդն որ բոլոր աշխարհք իր խելքովը կը զարմացընէր , դարձեր քրիստոնեայ եղեր է , ըսել է թէ աշխարհքիս վրայ քրիստոնէից հաւատքին պէս չիտակ ու աղէկ հաւատք չէ գտած » : Թագաւորը աս բանս թագուհւոյն պատմելով տեսաւ որ անիկայ արդէն ան մտքին վրայ է . վասն զի թագուհւոյն երեսին գոյնը փոխուեցաւ , աչուրները լեցուեցան ու չիկրցաւ սրտին ցաւը պարտըկել : Թագաւորը վախնալով որ յանկարծ վրան հիւանդութիւն մը չիգայ , դադրեցուց անկէց ետքը քրիստոնէից հաւատքին վրայ խօսիլը . ուրիշ պալատականներուն ալ սաստիկ ապրսպրեց որ չըլլայ թէ այնպիսի լուրերով թագուհւոյն տրտմութեան պատճառ ըլլան : Կարծէր թէ աս կերպով պիտի խափանէ Աստուծոյ շնորհքին ուժը : Իրաւցընէ ինչպէս կրնայ մարդ Աստուծոյ կամացը

դէմ կենալ , որ բոլոր մարդկանց
սիրտը անոր ձեռքն է , ու ինքն ուր
որ կ'ուզէ հոն կը դարձնէ :

Ճշմարիտ բարեկամ :

Թագուհւոյն ճշմարիտ Աստուածը ճանչնալու փափաքը օր օրի վերայ երթալով կ'աւելնար . ստէպ ստէպ Աստուծոյ աս ջերմեռանդ աղօթքները կ'ընէր . « Ա՛հ , երբ պիտի հասնիմ սրտիս փափաքած բանին , որ դու ես միայն՝ ո՛վ Աստուած քրիստոնէից . բայց ի՛նչպէս և ո՛ւր կրնամ գտնել զքեզ : Ար լսեմ որ Քրիստոս քու որդիդ է , ու Աստուած և մարդ է՝ ու ինքն է որ քու կամքդ սորվեցուցեր է քրիստոնէից : Ես ալ կը հաւտամ աս քու որդւոյդ , ու զինքը ինձի Աստուած կը ճանչնամ , կը յուսամ որ զինքը

դտնելով զքեզ ալ դտած կ'ըլլամ, ու
բեմն ինձի ալ տուր ան շնորհքն՝ որ
Տոսամին տուիր : Թէ որ ան մարդը
ճշմարիտ դտաւ քու սորվեցուցած
հաւատքդ, ես ինչո՞ւ չիկարենամ պի-
տի դտնել . դուն լուսաւորէ ուրեմն
իմ խաւարած աչուրներս ալ » :

Քանի որ ծածկել սկսան իրմէ
ճշմարտութիւնը , թագուհին ալ ա-
ւելի շատցուց աս աղօթքները . ու
որչափ որ անոնք զգուշութիւն կ'ը-
նէին , որ ամենեին դիմացը խօսք
չիբանան քրիստոնէից վրայ , ինքը
այնչափ կը ջանար նոր նոր բաներ
իմանալու . ու միտքը հաստատ դը-
րաւ որ օր մը չէ նէ օր մը դառնայ
քրիստոնեայ ըլլայ , թէպէտ և մեռ-
նիլ ալ անոր համար պէտք ըլլայ :

Միայն թէ ասանկ վտանգաւոր
բանի մէջ խոհեմութիւն ալ պէտք
է բանեցընել կ'ըսէր , որ ուրիշնե-
րը կասկած մը չառնեն , մանաւանդ
որ իր ամէն շարժմունքները դիտող
կար , որ չըլլայ թէ երթայ քրիստո-
նեայ ըլլայ :

Քանի քանի անգամ թագուհոյն
մտքէն կ'անցնէր՝ թէ ինչպէս ընէ
որ թագաւորն ալ համոզէ քրիստո-
նէ ըլլալու, կամ զոնէ իրեն քրիս-
տոնեայ ըլլալուն համար հրաման
ուզէ. բայց որ մը անոր բերանը
քիչ մը փնտռելուն պէս իմացաւ որ
խաբուեր է. ալ մարդիկներէն բո-
լոր իր յոյսը կտրեց, ու սիրտը
սկսաւ աւելի տակնուվրայ ըլլալ:

Օր մը երբոր նստեր Աստուծոյ
առջև իր սրտին ցաւերը կը յայտ-
նէր, յանկարծ Աստուած միտքը
բան մը ձգեց: Աս իրեն այնպէս
էր, ինչպէս թէ մէկ ճամբորդ մը
մութ ատեն ահադին անտառի մէջ
ճամբան կորսնցուցած ու տարա-
կուսած ատենը՝ մէյ մըն ալ բարե-
բար մարդ մը հանդիպի ու շիտակ
ճամբան ցուցընէ իրեն: Միտքը ին-
կածը աս էր որ, պալատին մէջը
մէկ բարեկամ մը ունէր, անոր
յայտնեմ ըսաւ իմ միտքս:

Աս բարեկամ ըսածը իշխանի մը
խաթուն էր նոյն թագաւորական

ցեղէն , որ գրեթէ թագուհւոյն տա-
րեկից էր , ու անոր հետ մեծցած :
Ասոնք մէկմէկու վրայ սէր ու միա-
բանութիւն ունէին . մանաւանդ թա-
գուհին մեծ վստահութիւն ունէր իշ-
խանուհւոյն վրայ , ու հետը շատ
անգամ սրտակցելով կը խօսէր , ու
գրեթէ միշտ քրիստոնէութեան վը-
րայ էր խօսակցութիւննին , և եր-
կուքն ալ համարմունք ունէին քրիս-
տոնէից հաւատքին վրայ :

Ուստի թագուհին օր մը համար-
ձակեցաւ իր բարեկամին սիրտ բա-
նալու , և հասկըցուց թէ քրիստո-
նեայ ըլլալու մեծ փափաք ունի :

Իշխանուհին աս լսելուն պէս՝ աշ-
խարհք իրեն եղաւ . « Ես ալ որչափ
ատեն է որ աս բանիս կը փափա-
ղիմ , ըսաւ , ես ալ զգուեր եմ մեր
կռապաշտներուն հաւատքէն . ու
ինչուան աս օրս միայն դրսուանց
կը պաշտէի անոնք , բայց սրտանց
մէկ ճշմարիտ Աստուած մը կը պաշ-
տէի » : Աս երկուքին նոյն մտքին
վրայ ըլլալնին , անանկ ուրախու-

Թիւն մը տուաւ իրենց սրտին , որ
մէկմէկու ուսը ինկած սկսան ու-
րախութեամբ արցունք թափել ու
իրարու սիրտ տալ : Խօսք դրին մէ-
ջերնին որ ինչ ընեն չընեն՝ քրիս-
տոնէութեան շնորհքին արժանի ըլ-
լան : Թաղուհին աղաչեց իր բարե-
կամին որ երթայ քարոզիչէ մը տե-
ղեկանայ , թէ քրիստոնէ ըլլալու
համար ինչ բան պէտք է . ան ալ
երթալու խօսք տուաւ :

Թաղուհին սիրտը կ'եփէր որ
ժամ մը առաջ իր փափաքին
հասնի . անոր համար աղօթքը ու
բարեգործութիւնները աւելի շատ-
ցուց : Շատ անգամ իր սենեակը կը
քաշուէր , ու իր բարեկամին տուած
Յիսուսի պատկերքին դիմացը ին-
կած , « Բարերար Աստուած , ես
քու դրած օրէնքդ թէպէտ և աղէկ
չեմ ճանչնար , դու օգնէ իմ բա-
րեկամիս որ կարենայ իմ փրկու-
թեանս համար աղէկ աշխատիլ , որ
ես իր ձեռքովը խալըսիմ իմ մոլո-
րութենէս : Իմ տէրս կ'ուզէ արդեւք

ըլլալ իմ երջանկութեանս , բայց
ատ իշխանութիւն կը յուսամ որ ա-
նոր արգելքները ցրուէ , ու զիս
ճշմարտութեան ճամբան հանէ :
Ինչուան աս որս բարեկամութեան
յարգը այսչափ չէի ճանչցած . խօսք
կու տամ ահա բոլոր սրտովս քեզի
ծառայելու , զքեզ սիրելու , ին-
չուան որ արժանի ըլլամ մկրտուիլ ,
ու սուրբ եկեղեցոյ զաւակ ըլլալ :
Ուստի օգնէ ինձի . քու շնորհքովդ
ես ամէն բան կրնամ ընել , պատ-
րաստ եմ համբերելու ամէն նեղու-
թեան ինչ որ վրաս գալու ըլլայ :
Առանց զքեզ ճանչնալու ապրիլս
ինձի մահ է : Գուն որ աղբիւր ես
ամենայն բարութեանց , լոյս սուր
ինձի ու ցուցուր՝ թէ ինչ ճամբով
կրնամ քեզի գալ » :

Գ

Մարիամ իշխանուհուհույն մկրտուհիդ :

Իշխանուհին ուր որ ուզէր հա-
մարձակ կրնար երթալ . ուստի ձեռ-
քէն եկած բարիքը կրցածին չափ
կ'ընէր ամենուն : Շատ անգամ կ'ել-
լէր կ'երթար քաղաք ու տնանկ աղ-
քատներուն բարիք կ'ընէր չիկար-
ծած ատեննին : Հետը իր աղախին-
ներէն մէկը առած , ամէն տեղ կը
փնտռէր կը դտնէր խեղճ մարդիկը ,
ու կը քաջալերէր զիրենք : Բոլոր
քաղաքը՝ իր բարեգործութեան ա-
նունը ելած էր . թագաւորն ալ լսե-
լով ըրած աղէկութիւնները , առատ
ստակ կու տար իրեն որ ուզածին
սլէս բանեցընէ . անկէց 'ի դատ ի-

րեն ազնուական կերպին համար՝
ինչ որ խնդրէր թագաւորէն՝ մէկէն
հրաման կու տար :

Աս իրեն ստէպ ստէպ դուրս ել-
լելու առթովը դիւրաւ կրնար քարո-
ղիչ մը գտնալ , առանց ուրիշի կաս-
կած մը տալու . մանաւանդ որ թա-
գաւորն ալ ան միջոցին հոն չէր :

Վերջապէս մէկ քարոզիչ մը
հանդիպեցաւ . տեսածին պէս՝ հաս-
կըցաւ թէ ասիկայ Քրիստոսի ծա-
ռայից մէկն է . մտքէն ըսաւ թէ
« Ես ամենեին աս պատկառելի ու
սրբակաց կերպը չեմ տեսած մեր
պոնցերուն վրայ » : Խօսք բացաւ
ասոր , ու տեղն 'ի տեղը պատ-
մեց ինչ որ անցեր էր իրեն ու թա-
գուհւոյն հետ . ու իրենց երկուքին
ալ քրիստոնէ ըլլալու փափաքը
յայտնեց . բոլոր աս բաներս անանկ
մէկ պարզսրտութեամբ ու անկեղ-
ծութեամբ պատմեց՝ որ քահանային
ամենեին տարակուսելու պատճառ
չիմնաց :

Ուստի յանձն առաւ իրեն քրիս-

տոնէութեան օրէնքները սորվեցը-
նելու , ու շատ աշխատանք պէտք
չեղաւ : Իշխանուհին թագուհոյն
մէկ քանի ունեցած տարակոյսներն
ալ հարցուց քարոզիչին , և ուշա-
դրութեամբ ու պատկառանքով մը-
տիկ ըրաւ քահանային տուած լուծ-
մունքները : Ետքը ուրախութեամբ
լցուած պալատը դարձաւ , ու բո-
լոր լսածները իր բարեկամին պատ-
մեց :

Հասաւ իրեն մկրտուելու երջա-
նիկ օրը . ալ անոր սրտին ուրախու-
թիւնը ո՞վ կրնայ պատմել . անունը
Մարիամ դնել տուաւ ու ասանկով
ինքզինքը նուիրեց սուրբ Աստուա-
ծածնի , իբրև առաջին պտուղ ան-
ցեղին : Մկրտութենէն ետքը բո-
լորովին փոխուեցաւ , Քրիստոսի
սիրոյն կրակը սրտին մէջ բորբո-
քեցաւ , ու նոր առաքեալ մը դար-
ձած , սկսաւ ճշմարտութիւնը քա-
րոզել և ուրիշները քրիստոնէու-
թեան դարձընել : Թագուհին ասանկ
իրեն յանկարծ փոխուելուն վրայ

դարմացած, հարցուց ու իմացաւ
պատճառը՝ թէ քրիստոնէութեան
չնորհքին ուժն է ասիկայ. ու քա-
նի որ կը տեսնէր իր բարեկամին աս-
նոր կերպը, այնչափ աւելի փափա-
քը կը վառուէր քրիստոնէից հա-
ւատքը ընդունելու: « Երանի քրիս-
տոնեաներուն, կ'ըսէր, որ անանկ
հաւատք մը ունին՝ որ բոլոր առաքի-
նութիւն կը բղխէ: Ա՛հ, երբ պի-
տի դայ ան օրը, որ ես ալ վազեմ
իյնամ իմ Քրիստոսիս ոտքը՝ ըսե-
լով, ես ալ քու զաւակդ եմ, որդե-
պիրդ եմ: Ա՛հ, Մարիամ, նայէ,
ետե՛է եղի՛ր որ ժամ մը առաջ իմ
փրկութեանս ալ պատճառ ըլլաս.
բայց ի՛նչպէ՛ս ընենք. երջանիկ ես
գուն. ո՛ր էր թէ ես քու տեղդ ըլ-
լայի. ի՛նչ ուրախութեամբ աս ան-
ցաւոր զարդերս մէկէն վրայէս կը
հանէի, ու Յիսուսի տուած սուրբ
անարատ զգեստը կը հագնէի »:
Ասոնք ըսելով աղբիւրի պէս ար-
ցունք կը թափէր. իր բարեկամն
ալ ան միջոցին կը ջանար ձեռքէն

եկաճին չափ զինքը մխիթարելու ու
խօսք տալու, որ զինքն ալ շուտով
մկրտել տայ :

Մարիամ պահեց իր տուած խօս-
քը, ու կ'աշխատէր որ ճար մը գըտ-
նէ թաղուհին մկրտել տալու. բայց
աս անգին դանձը թաղուհիէն ա-
ռաջ ուրիշներուն շահելուն պատ-
ճառ եղաւ : Մարիամին քարոզու-
թենէն թաղուհւոյն սպասաւորնե-
րէն շատը յորդորուեցան քրիստո-
նեայ ըլլալու, ու անոր սուրբ կեն-
ցազավարութենէն ալ քրիստոնէ
ըլլալու պէտք եղած բաները տես-
նալով սորվեցան ու մկրտուեցան .
երեւի իշխաններէն մէկն ալ որ
միայն հետաքրքրութեան համար
դացեր էր ասոնց մկրտուիլը տես-
նալու, ճանչցաւ իր մոլորութիւնը
ու դարձաւ ինքն ալ քրիստոնէ ե-
ղաւ : Աս կերպով Քրիստոսի թա-
ղաւորութիւնը մտաւ տիրեց թա-
ղաւորական պալատին մէջ, որուն
վրայ շատ ուրախացան՝ թէ Մա-
րիամ և թէ թաղուհին :

Թագուհւոյն քրիստոնէ ըլլալը :

Թագուհին որչափ որ մէկ կողմանէ կ'ուրախանար Մարիամին հոգիներ վաստըկելուն վրայ, մէկալ կողմանէ ալ այնչափ կը ցաւէր՝ որ շիկրնար ինքն ալ մասնակից ըլլալ անոնց երջանկութեանը : Արդէն աշխարհքիս ամէն զուարճութիւններէն զզուեր էր . բայց պալատա կանաց մէջէն նոր դարձած քրիստոնէից ուրախութիւնն ու երջանկութիւնը տեսնելով, աւելի զզուեցաւ ամէն երկրաւոր փառքէ : Անդադար կու լար կ'ողբար ու սրտին ցաւը քանի կ'երթար կը շատնար : Մարիամ առ տեսնալով վախցաւ,

որ չըլլայ թէ վրան հիւանդութիւն
մը դայ. զնաց խօսեցաւ քահանային
հետ, թէ ինչ ընեն որ թաղուհւոյն
սիրտը հանգչեցընեն, ու զինքն ալ
եկեղեցւոյ որդի ընեն: Արովհետեւ
կարելի բան չէր որ քահանան պա-
լատը երթայ, ինքը ամէն պէտք ե-
ղած բանը Մարիամին սորվեցուց,
ու հրաման տուաւ որ ասոնք թա-
ղուհւոյն հասկըցընէ, ու զինքը
մկրտէ:

Մարիամ սիրով և ուրախութեամբ
յանձն առաւ աս վտանգաւոր գործ-
քը, թէ պէտ և զիտէր որ թաղաւո-
րը իմանալու ըլլայ թէ ան է իր թա-
ղուհին զլխէն հանողը, բանը գէշ
է. բայց Քրիստոսի սէրը ամէն
բան մտցընել տուաւ իրեն: Եր-
կիւղածութեամբ ու ջերմեռանդու-
թեամբ ինչպէս սորվեցաւ քարոզ-
չէն՝ անանկ ալ սորվեցուց իր բա-
րեկամին քրիստոնէական վարդա-
պետութիւնը, ու երբոր անիկայ
չափաւոր կերպով պատրաստուե-
ցաւ, իրեն ըսաւ թէ վաղը մկրտու-

Թեան խորհուրդը կը կատարեմք ու վրայ . աս խօսքը թագուհւոյն սիրտը անպատմելի ուրախութեամբ լեցուց :

Երկրորդ օրը թագուհին սրտանց աղօթքներ ընելէն ետքը ծունկ չոքեցաւ խաչելութեան առջևը փառաւոր սրահի մը մէջ ու ինքզինքը Աստուծոյ նուիրեց : Մարիամ եկաւ քաջալերեց զինքը , ինչպէս որ ապաստարներ էր քահանան , ու ետքը դողդղալով լեցուց փրկական ջուրը անոր գլխուն վրայ , ու մկրտեց յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ : Մկրտութիւնը ինչ դօրութիւն որ ցըցուցեր էր Մարիամին վրայ , մէկէն թագուհւոյն վրան ալ երևցուց . վասն զի Հոգւով սրբով լեցուեցաւ , ու եղաւ ճշմարիտ քրիստոնեայ :

Այսպէս հասաւ թագուհին ան երջանկութեանը , որուն այնչափ ատենէն 'ի վեր գիշեր ցորեկ լալով ողբալով կը սպասէր . ալ անկէ ետքը Աստուած իրեն էր , ինքն

Աստուծոյ : Ունեցած ուրախութիւնը այնչափ մեծ էր՝ որ բերնով չէր կրնար պատմել : Տրամութիւնն որ պատեր էր իր սիրտը , մէկէն 'ի մէկ փարատեցաւ . այնչափ փոխուեցաւ՝ որ տեսնողները կարծէին թէ իրացընէ նոր աշխարհք եկած է : Անունն ալ քահանային խորհուրդովը դրին Երանեակ , վասն զի թէ ուրիշները և թէ ինքը երանի կուտային իրեն , որ այսպիսի մեծ շնորհքի արժանի եղաւ : « Ես հիմայ չէ թէ մինակ պարզ թաղուհի եմ , կ'ըսէր ուրախութեամբ , հապա ինքնակալին խաթունէն ալ վեր եմ , վասն զի երկնից թաղաւորին դուստր եղայ , ու օր մը յաւիտեանս յաւիտենից Աստուծոյ հետ պիտի վայելեմ ան թաղաւորութիւնը՝ որ անցնելիք չունի : Ի՞նչ փոխարէն պիտի ես կարենամ ընել ասանկ մէկ մեծ շնորհքի մը . բայց եթէ հաւատարմութեամբ իմ Փրկչիս ետեւէն երթամ , ու ան առաքինութիւնները որ ինքը կը պատուիրէ

սուրբ անտարանին մէջ կրցածիս
չափ կատարելու աշխատիմ, ու իմ
ախտերու հետ պատերազմիմ. ան
ատենը միայն կրնամ ըսել թէ ես
ալ քրիստոնէ եմ: Այն իմ գլխու
թէ որ պարտքերս կատարելու ան-
հոգ ըլլամ, մոռնամ մկրտութեան
ատեն ըրած խոստմունքներս, ու
դառնամ նորէն գերի ըլլամ աս
աշխարհքիս, ուսկից յայտնի հրա-
ժարեցայ: Ասկէց ետքը աշխարհ-
քս ինծի հետ բան չունի. ասկէ
ետքը ես պիտի գովեմ ու բարեբա-
նեմ ինչուան վերջի շունչս դԱս-
տուած՝ որ զիս խալըսեց մեղքերէս
որ վայելեմ իրեն քաղցր ազատու-
թիւնը: Աշխարհքիս վրայ ես թա-
ղուհի կ'ըսուիմ, բայց կ'ուզեմ թա-
ղուհի ըլլալս ուրիշ կերպով մը իմա-
ցընել. իմ ժողովուրդս ախտերն
են՝ անոնք պէտք է կառավարեմ,
անոնք պէտք է ծառայեցընեմ, ու
թող շիտամ որ իմ վրաս տիրեն »:
Ետքը Յիսուսի պատկերքին առ-
ջեր ինկաւ ու սրտանց պաղատելով

ըսաւ . « Ա՛յ ողորմած Աստուած ,
հաստատ պահէ զիս քու շնորհքիդ
մէջ . լուսաւորէ իմ միտքս որ աղէկ
ճանչնամ աս շնորհքին յարդը : Ես
ձեռքէս եկածին չափ խօսք կու
տամ քեզի ծառայելու . ես զիս բո-
լորովին քեզի կու տամ . իմ սիրտս
միայն դ.քեզ պիտի սիրէ . միտքս
միայն դ.քեզ պիտի մտածէ . ձայնս
քեզ միայն պիտի օրհնէ , մարմինս
քեզի սուրբ ողջակէզ պիտի ըլլայ .
Տէր բարերար , դու ընդունէ իմ
ղոհս » :

Վեհաճեմեանսն զիտաւշորոշիւն :

Պատմութենէն զիտենք որ Մարիամ իշխանուհին թագուհին մը կըրտելէն ետքը , ալ աւելի սիրելի եղաւ Աստուծոյ . ուստի իրեն զօրաւոր շնորհքին ուժովը անանկ վեհանճնական մտածութիւն մը եկաւ իր սրտին , որ բոլոր աշխարհք զարմացուց : Երբոր մէկուն սիրտը Աստուծոյ սիրոյն կրակով վառուած է , որչափ մեծ առաքինութիւն ըլլայ շուտով ձեռք կը զարնէ ու կը կատարէ . ասանկ ալ Մարիամ ուխտ ըրաւ Աստուծոյ , որ ինքզինքը բոլորովին անոր նուիրէ , ու մէկդի թողու բոլոր աշխարհային մեծա-

մեծ փառք պատիւ ու զուարճու-
թիւններն որ կրնար ունենալ : « Ես
կոյս մնալ կ'ուզեմ, ըսաւ օր մը
Թագուհւոյն, ու բոլորովին զիս Աս-
տուծոյ նուիրել. միտքս ան է որ ա-
սով իրեն աւելի սիրելի ըլլամ. մի
կարծեր թէ աս մտածմունքը երևա-
կայութիւն մըն է. չէ, ատանկ չէ.
Հապա սրտիս մէջ կրտկ մը կայ որ
զիս կը յորդորէ միայն Յիսուսի
հարս ըլլալու » :

Թագուհին առջի բերան չէր զի-
տեր թէ ինչ զուրցէ, բայց քիչ մը
մտածելէն ետե հասկըցաւ, թէ
ատ Աստուծոյ մասնաւոր ազգեցու-
թիւնն է. « Քեզի, ըսաւ, ուրիշ
բան չեմ կրնար ըսել, բայց եթէ
ուրախակից ըլլալ, և սիրտ տալ որ
խոստմունքիդ վրայ հաստատ կե-
նաս. միայն կ'աղաչեմ որ զիս ա-
զօթքէ չիմոռնաս. վասն զի զիտեմ
թէ ինչ որ Աստուծմէ պիտի խըն-
դրեմ նէ՛քու ձեռքովդ աւելի շու-
տով կ'ընդունիմ » :

Մարիամ Թագուհւոյն քովէն ել-

լելուն պէս , վաղեց զնաց մէկէն
յարդելի քահանային ալ խմացուց
իր միտքը : Սուրբ քահանան խել
մը ատեն ասիչա՞ծ մնալէն ետքը
ոտք ելաւ քաշուեցաւ մէկ սենեակ
մը , ուր որ իր աղօթքը կ'ընէր . ա-
ղաչեց Աստուծոյ որ իրեն լոյս տայ
ասանկ դժուար նիւթի մէջ . ետքը
դարձաւ եկաւ ու Մարիամին բ-
սաւ .

« Քու հաստատուն հաւատքիդ
վրայ դարմացեր եմ , և յայտնի կը
տեսնամ որ Աստուած քեզի համար
մեծ բաներ պատրաստեր է . և իր
միտքը շատցընելու համար քեզ
ձեռք առեր է , ու կ'ուզէ շատ կուս-
պաշտներ քեզմով դարձընել : Աս
միշտ կոյս մնալու գիտաւորութիւնը
միտքդ ձգողը Աստուած է . կ'ուզէ
որ ուրիշներն ալ դքեզ տեսնալով
գիւրաւ դառնան քրիստոնէ ըլլան :
Ուստի ես ալ կը յայտնեմ քեզի յա-
նուն Յիսուսի Քրիստոսի , որ աս
ուխտը ընել ուզես նէ՛ ես կ'ընդու-
նիմ ու կը հաստատեմ » :

Ան ատենը Մարիամ դողդըղալով ելաւ հետը աղօթարան մտաւ . ձեռքերն իրարու վրայ բերաւ , դարձուց աչուրները դէպ 'ի երկինք ու յստակ ձայնով ըրաւ աս փառաւոր երգումը , թէ « Աշխարհքիս վրայ Յիսուսէն զաս ուրիշ փեսայ չունենամ » . հրեշտակներն ալ մէկէն գրեցին վերը անմահութեան գրքին մէջ աս թանկոյի իշխանութեան խոստումները :

Անկէ ետքը մէկէն նայեցաւ որ իր երջանկութեան մէջ հաստատուի , անոր համար հրաժարեցաւ աշխարհքիս ան բաներէն որ իրեն կրնային արդելք մը ընել . հանեց ծախեց առջի ունեցած փառաւոր հագուստները , ու առած ստակը աղքատներուն բաժնեց . ասանկ ըրաւ մնացած զարդերն ալ , ու հաղաւ պարկեշտ միջակ զգեստ մը :

Քաղքին մէջ երբոր լսուեցաւ աս ուխտը , ամէնն ալ զարմացան . մանաւանդ ան մեծամեծներն որ իրեն փեսայ ըլլալու յոյս ունէին : Մարդ

չիկար որ շիգովէր աս առաքինա-
կան խոստմունքը . ամէնը մատով
կը ցուցընէին զինքը ու իրարու կ'ը-
սէին . « Տեսէք տեսէք Քրիստոսի
հարսը . տեսէք ան մեծ իշխանու-
հին , որ իր Աստուծոյն սիրոյն հա-
մար ոտքի տակ առաւ աշխարհքիս
փառքն ու մեծութիւնը » :

Ամենէն աւելի թագուհին իր բա-
րեկամին ըրած ուխտը սկսաւ ին-
չուան երկինք բարձրացընել , ու
սրտին ուրախութիւնը չէր զիտեր
ինչ կերպով անոր յայտնէ . « Քու
ըրած առաքինութեանդ վարձքը ,
արդէն աս աշխարհքիս վրայ ալ ա-
ռատ կերպով կ'առնես , կ'ըսէր .
տուած բարի օրինակովդ չէ թէ
միայն նոր դարձողները քրիստո-
նէութեան մէջ կը հաստատես ,
հապա ուրիշներուն ալ պատճառ
կ'ըլլաս քրիստոնեայ ըլլալու : Ո՛ր
թողում որ ես չեմ զիտեր ինչպէս
չնորհակալ ըլլամ Աստուծոյ , որ
ինձի քեզի պէս բարեկամ մը տուաւ
որ զիս մոլորութենէ խալըսէ : Ա.Ս.

տուած տայ որ մէկմէկէ չիբաժ-
նուինք , ու մեր օրերը առաքինու-
թեամբ ու ջերմուանդութեամբ ան-
ցրնենք » :

Է

Թագաւորին հասնելը :

Օր մը Թագուհին ու իր բարեկամը Մարիամ ելան մէկտեղ պալատին մէջ սկսան քիչ մը ժուռ դալ . և տեսնալով անտառին գեղեցկութիւնը , բոյսերուն աղուորութիւնը , կը զմայլէին ու փառք կու տային Աստուծոյ : Ամէն բան իրենց նոր կ'երևնար . ինչու որ հողինին իրենց փափաքին հասած էր :

Մէյ մըն ալ յանկարծ ուրախութեան ձայն մը բրդաւ պալատին մէջ , թէ Թագաւորը կու գայ , եկաւ Թագաւորը . և իրաւցընէ ոսկւով ու ազնիւ քարերով զարդարած կառքը որոտալով մը եկաւ մտաւ պա-

լատին բակը . ու բոլոր պալատը ու
բախութեան ու նուազարանի ճայ-
ներէն կը թնդար : Թագուհին ու
Մարիամը մէկէն թագաւորին առ-
ջնն ելան . ան ատենը բոլոր ճայ-
ները կտրեցան : Թագաւորը ինջաւ
կառքէն , իշխանները թեր մտան ,
ու կարծես թէ Աստուծոյ պէս կ'ու-
ղէին պաշտել . բայց իրեն զէմքը որ
ուրիշ անգամ ուրախ կ'ըլլար , աս
անգամ բոլորովին ժանտացեր էր ,
ու թագուհւոյն երեսն ալ չէր ուզեր
տեսնել : Իսկ երբոր ողջութեամբ
դառնալուն վրայ ուրախակցութիւն
ըրաւ թագուհին , թագաւորը սոս-
կալի ճայնով մը կանչեց անոր
դէմ . « Քաշէ ճայնդ , ըսաւ , աչքս
չիտեսնէ դքեդ . զնա նստէ պալա-
տիս մէկ ծայրը , ու քու խաչելեալդ
պաշտէ . ես քեզի կը հասկըցընեմ
թէ ինչ ըսել է իմ թագաւորու-
թեանս աստուածներն անարգելը » :
Ետքը աչուրները դարձուց Մարիա-
մին վրայ ու ըսաւ . « Դուն ալ դի-
մացէս կորսուէ , ու շնորհակալ ե-

դիր որ ուրիշ մեծ պատիժ մը չեմ տար քեզի իմ պաշատիս մարդիկը խարելուդ ու մուրցընելուդ համար . զնա՛ թագուհւոյն քովը : Լսեցէք ամէնքդ ալ , ով որ հոս չեղած ատենս ուրացաւ մեր աստուածները , թող մէկզի ձգէ աս նոր կրօնքը , չէ նէ ամէնքդ ալ կտոր կտոր կ'ընեմ » :

Ո՛վ կրնայ պատմել թէ ինչպէս ամենուն սիրտը ահով դողով լեցուեցաւ աս դիպուածէս . մտածեցէք , հանգարտ ու դուարթ օրէ մը ետքը , իրիկուան դէմ յանկարծակի մէկ փոթորիկ մը մէկ կարկուտ մը կայծակներով պարտէզի մը վըրայ իջնայ՝ ջարդէ կտորէ ամէն բան տակնուվրայ ընէ՝ տեսնողներուն սիրտը ինչ կ'ըլլայ . ասանկ եղաւ նաև բոլոր ան խեղճ պաշատականաց սիրտը , երբոր լսեցին թագաւորին զուրցած խօսքերը : Ամէն մարդ վախէն կը դողար , որ չըլլայ թէ իր գլխուն ալ փորձանք մը դայ . մէկը չէր համարձակեր թագաւորին

դիմացը ելլելու, վասն զի դիտէին
որ իր չաստուածներուն եղած նա-
խատանաց վրէժը առնելու համար
ամէն շարիք կ'ընէ :

Իսկ երկու հարազատ բարեկամ-
ները, որ պատրաստ էին Աստու-
ծոյ համար ամէն բան քաշելու, փո-
թորիկը ամենեկին բանի տեղ չի-
ղրին. հապա հանդիստ սրտով
զուխնին քաշեցին ելան դացին ի-
րենց տեղը. կարծես թէ մէյմէկ
բարձր ու անչարժ կաղնի ծառեր
էին, որ փոթորիկը որչափ սաստիկ
ալ ըլլայ, իրենց արմատը խախ-
տել չիկրնար : Յիշելով աւետարա-
նին ան խօսքը, որ կ'ըսէ Քրիստոս
տէրն մեր, թէ « Առանց իմ հօրս
կամացը ձեր զլխէն մաղ մըն ալ
չիյնար », անխռով սրտով կը նայ-
էին թէ ծայրը ուր պիտի երթայ :

Բայց թաղաւորը այնչափ բար-
կացած չէր՝ որչափ որ կը կարծէին :
Քաղքին քրմապետը լսելով պալա-
տին մէջի եղածները, մէկէն եկաւ
թաղաւորին հետ խօսեցաւ, ու խոր-

հուրդ տուաւ թէ « Թագուհին իր
առջի հաւատքը դարձրնելու համար
մէկ հատիկ ճարը աւ է՝ որ չարա-
չար պատժես զինքը , ըսաւ , ին-
չուան խելքը զլուխը դայ , խոնար-
հի , իր յանցանքը ճանչնայ » : Թա-
գաւորը պատասխան տուաւ թէ
« Խել մը ատեն երեսը չինայելս ալ
բաւական է զինքը մեղայի բերելու ,
որ դայ թողութիւն ուղէ ինծմէ , ը-
սելով թէ պարսպ գանուեցայ ու
իմ բարեկամէս խաբուեցայ » : Ար-
դէն ալ միտքը դրեր էր թէ զղջալու
ըլլայ նէ՝ իրեն շատ պատիւներ
ընէ :

Ը

Երկուք թանաքիկեալները :

Երանեալն ու Մարիամը սիրով
 և ուրախութեամբ համբերեցին քա-
 շած նեղութիւններնուն , ու շնոր-
 հակալ եղան Աստուծոյ , որ զիրենք
 արժանի ըրաւ այնչափ նեղութիւն
 քաշելու : « Աս մեր քաշածը բան
 մըն է , կ'ըսէր թագուհին , Քրիս-
 տոսի զխնացը , որ մեզի համար
 մեռնիլ յանձն առաւ : Ո՛ր էր թէ
 թագաւորը զիս փուշերով պսակէր .
 ան ատեն համարձակ կրնայի նայել
 Յիսուսի վրայ , թէ ես ալ քիչ մը
 իրեն նմանեցայ :

— Թող կ'ուզէ նէ զմեզ ալ խաչ
 հանէ , ըսաւ Մարիամն ալ , ան ա-

տեն մենք իրաւցընէ երջանիկ կ'ըլլանք : Քրիստոնէն ոչ երբէք ճշմարիտ քրիստոնեայ կ'ըլլայ , թէ որ նեղութիւն չիքաչէ : Պէտք ըլլայ նէ արիւննիս թափենք Քրիստոսի համար , միայն թէ իրմէ ետ չիկենանք :

— Չէ , չէ , Աստուած պահէ » , ըսաւ Երանեակը :

Թագաւորը կը սպասէր որ երկուքն ալ դան ոտքն իյնան , ու թողութիւն ուզեն . բայց տեսնալով թէ եկող դացող չիկայ , զղջացաւ հետերնին այնչափ տաք խօսելուն վրայ . ուստի մտքէն ըսելով թէ կարելի է որ վախերնէն է չիղալնին , մարդ խրկեց որ իմացընէ իրենց թէ թագաւորը պալատին մէջ անանկ հաւատք չուզեր , որ իր կամացը դէմ ըլլայ , ես առաւել չիկըրնար թող տալ որ իր թագուհին ու թագաւորազուն կոյս մը աս հաւատքին տէր ըլլան : Չիկըրնար աչք դոցել ան բանին որ իր պատուոյն կը նայի . ինքը ինչուան հիմայ կը

յուսար որ դուք դառնաք թողու-
թիւն ուղէք ձեր սխալանաց . ու
պատրաստ է ինքը սիրով ներելու և
ձեր հնազանդութիւնը վարձատրե-
լու » : Գնաց մարդը քաղաքավա-
րութեամբ ու անուշութեամբ հե-
տերնին խօսեցաւ , ու տալու պար-
զեններուն մէկ քանին ալ զուրցեց :
Թագուհին հանդարտ ու աղնուա-
կան կերպով եկողին պատասխան
տուաւ . « Ըսէ թագաւորին , թէ Ե-
րանեակը , (աս է իմ սուրբ մկրտու-
թեան անունս) , ամէն կերպով հա-
ւատարիմ է էրկանը , ու հնազանդ
է անոր հրամաններուն , ու միշտ
պիտի ըլլայ . բայց պարտրկան է
աւելի հաւատարիմ ու հնազանդ ըլ-
լալու թագաւորներուն թագաւորին
որ է իր Աստուածը : Շատ շնորհա-
կալ է իր տալու մեծամեծ սլարզե-
ներուն , ու աղէկ կը ճանչնայ էր-
կանը զթած սիրտը , բայց շատ ա-
ւելի վեր կը գնէ Աստուծոյ շնորհքն
ու բարեկամութիւնը : Ինքըզինքը ե-
րանելի կը սեպէ , և ուրախ է Քրիս-

տոս ճանչնալուն վրայ, և զիչեր ցո-
րեկ անդադար կ'աղաչէ կը պաղա-
տի Աստուծոյ՝ որ իր էրկանն ալ
չնորհք տայ, աս նոր հաւատքիս
քաղցրութիւնը ճանչնալու » : Մա-
րիամն ալ նոյնպիսի բաներ խօսե-
ցաւ թագաւորին խրկած մարդուն
հետ :

Ո՛վ կրնայ պատմել թագաւորին
զարմանքը, երբոր իմացաւ թէ իր
կինը մկրտուեր է : Մէկէն սիրտը
վկայեց թէ աս Մարիամին բանն
է. երզուրնցաւ որ անկէ վրէժն
առնէ, իր կնիկը զլխէ հանելուն
համար : Բայց բոլորովին յոյսը չի-
կտրեց. միտքը դրաւ թէ սպառնա-
լիքներով կը խոնարհեցընէ զիրենք :
Անոր համար նորէն մարդ խրկեց
իմացընելու իրենց, թէ թագաւորը
զձեզ կ'ուզէ տանջել ու չարչարել,
ինչուան պէտք ըլլայ նէ սպաննել
ալ : Երկուքն ալ մէկ բերան պա-
տասխան տուին՝ թէ մեր ուզածն
ալ ան է :

Թագաւորը բարկութենէն կատ-

դեցաւ . որչափ որ քրիստոնեայ
կար պաշատին մէջ , անոնց ետեւն
ինկաւ որ դարձընէ , բայց ամենէն
ալ նոյն պատասխանը լսեց . վասն
զի Արանեակին ու Մարիամին ա-
ղօթքին ու բարի օրինակին նայե-
լով , սիրտ առին ու խօսքերնուն
վրայ հաստատ կեցան :

Ան ատենը թաղաւորին բարկու-
թեանը չափը լեցուեցաւ . մանա-
ւանդ երբոր իմացաւ թէ իր թաղու-
հին է եղեր առջի քրիստոնէ ըլլալ
ուղողը :

Հրաման խրկեց Արանեակին որ
հանէ ձգէ ունեցած մեծութեան
պատիւները : Թաղուհին սիրով
հնազանդեցաւ հրամանին . « Ինձի
համար մեծ պատիւ է , ըսաւ , աս
անցաւոր դարդերս վրայէս հանե-
լը . միթէ Յուսուսի վրայէն չիհա-
նեցին իր զգեստները չարչարանաց
ատեն , ու անոնց տեղը պատըռ-
տած լաթ չիհազուցին զինքը ծաղր
ընելու համար , բայց ինքը նոյնպէս
թաղաւոր էր : Արնէ՛կ ինձի , որ ա-

նոր կը նմանիմ. թող որ ես աս ըզ-
ղեստները կորսունցընելով ամենե-
ւին բան մը չեմ կորսունցըներ. մի-
թէ ես մկրտութեան ատենս անմե-
ղութեան զգեստը չիհագայ: Քրիս-
տոնէին ճշմարիտ դարդը աս է. իսկ
մնացածը բոլոր ունայնութիւն » :

Թագաւորը երբոր իմացաւ թէ իր
կիներ սիրով հրաժարեր է ունեցած
պատիւներէն, ապսպրրեց որ ան-
կէց ետքը ամենեին թաղուհոյ ա-
նուն չիտան իրեն, հապա ծաղր ը-
նելու համար Արանեակ ըսեն: Մա-
րիամն ալ իր ազնուականութեան
պատուէն դրկեց, ու իրեն ցեղին
նախապահները կը կանչէր իրեն:

Իսկ Արանեակն ու Մարիամը
հանգալտ սրտով իրարու կ'ըսէին՝
թէ « Մենք անանկ անուններ ու-
նինք հիմայ՝ որ բոլոր աշխարհքիս
պատուոյ անուններէն վեր է: Մենք
մկրտուեցանք յանուն սուրբ Արրոր-
դութեան, և կը համբերենք Յիսու-
սի սուրբ անուանը համար, որ
յանձն առաւ ըսուիլ նաև որդի հիւ-

սան , ու թագաւոր Հրէից . մարդիկ
որչափ մեղ նախատեն , Սատուծոյ
առջև այնչափ կը փառաւորուինք » :

Ինչուան ան օրը իրենք ալ թա-
գաւորին կերած կերակուրներէն
կ'ուտէին . բայց ետքը ան ալ վեր-
ջացուցին , ու սկսան քիչ բան տալ
միայն ապրելու չափ : Թագաւորը
զուրցընել տուաւ իրենց , թէ քրիս-
տոնէ ըլլալով , պէտք է Քրիստոսի
պէս աղքատ ապրիք , որ ամենեին
թագաւորի սեղան չէ նստած : « Ի-
րաւ է թագաւորին ըսածը , ըսաւ Ե-
րանեակը , ես ու Մարիամ զոհ ենք
ձեր տուած կերակուրին . թէ որ
թագաւորը ուզէ նէ , թող մեր կե-
րակրին մէջ լեղի ու քացախ ալ
խառնէ , մենք ուտելէն չենք քա-
շուիր , որպէս զի աս բանիս մէջն
ալ Քրիստոսի նմանած ըլլանք » :

Թագուհին ու Մարիամը տարին
զրին թաց ու մութ սենեակ մը ,
ուսկից զուրս ելլալու հրաման չու-
նէին : Պատուհանները գոցեցին որ
սպարտէզն ալ չիտեսնան , ու սպա-

հապաններ գրին գրան առջևն , որ
չըլլայ թէ յանկարծ փախչին :

Անոնք կը ծիծաղէին ըրած զգու-
շութիւններուն վրայ . « Ան ազա-
տութիւնը որ քրիստոնեան ունի
սրտին մէջ , կ'ըսէր Մարիամ , իր
բանտն ալ արքայութիւն կը փոխէ :
Միայն մեր փափաքն ալ որ ունինք
իրեն համար համբերելու , մեր ա-
մէն ցաւը կը մոռցընէ , ու անանկ
ուրախութիւն կու տայ սրտերնուս՝
որ բոլոր աշխարհք պտըտելու ըլ-
լայինք չէինք կրնար դտնալ » :

Ասանկ աս սուրբ անձինքը ամէն
բանէն իրենք զիրենք մխիթարելու
պատճառ մը կը դտնային : Միայն
մէկ բան մը կար որ զիրենք շատ կը
վախցընէր , այսինքն էր չըլլայ թէ
որ մը զիրենք մէկմէկէ դատեն .
բայց դարձեալ Աստուծոյ սիրոյն
համար ատոր ալ կը համբերենք
կ'ըսէին . կը զարմանային ալ թէ
ինչուան հիմա ինչպէս չեն մտա-
ծեր զիրենք մէկմէկէ բաժնելու :
« Թէ որ ուզեն ալ զմեզ հանել աս-

կէ տանել մէյմէկ դատ դատ մութ
ու հոտած տեղ դնել, մեր սիրտը
մէկմէկէ չեն կրնար բաժնել, կ'ը-
սէր թագուհին : Աս սուրբ սէրը
մեր հաւատքին հետ կապուած է,
ու չինմանիր ան սիրոյն՝ որ աշ-
խարհքիս մարդիկը իրենց շահուն
ու օգտին համար մէկմէկու կը ցու-
ցընեն . մեր ունեցած սէրը Աստու-
ծոյ պարզե է » :

Ատեն ատեն փափաքնին կը շար-
ժէր նաև մէկմէկէ բաժնուելու, որ
աւելի վարձք վաստըկին . « Երբոր
Աստուած մեզի հետ է, ի՞նչ կը պակ-
սի մեզի, կ'ըսէին իրարու . Յիսուս
մինակ չէր, երբոր զինքը մէկ դա-
տաստանէն մէկալը կը տանէին :
Իր սիրելի աշակերտները զինքը չի-
թողուցին չիփախան . իր բարեկամ-
ներէն ո՞րը կեցաւ քովը որ չարչա-
րանաց ատենը զինքը մխիթարէր :
Ինչո՞ւ ուրեմն մենք պիտի ցաւինք
մէկմէկէ բաժնուելնուս համար : Ա-
մէն բանի պատրաստ ըլլանք, որ ա-
տեն գալու ըլլայ նէ, չիխուովինք :

Մեծամեծ նեղութիւններ քաշենք որ
վարձքերն իս ալ մեծ ըլլայ : Ան ա-
տեն ճշմարտաբարեկամ կ'ըլլանք
Աստուծոյ , երբոր բոլոր աշխարհք
մեզ երեսէ թողու . անոր մեր հետ
ըլլալը միայն բաւական է մեզի » :

Իսկ թագաւորը՝ իր սրտին բար-
կութիւնը ձեռքէն եկածին չափ կը
թափէր խեղճերուն վրայ . շատ ան-
գամ մտքէն անցաւ որ մէկմէկէ
հետացընէ զիրենք . բայց քրիստո-
նէական սիրոյն ու բարեկամու-
թեան յարգը չիզիտնալուն՝ չէր կար-
ծեր թէ ասիկայ մեծ բան մը ըլլայ
իրենց . անոր համար թողուց որ
մէկտեղ մնան :

Հրաշալի բժշկութիւն :

Աստուծոյ նախախնամութիւնը շատ դարմանալի բան է իր ընտրելոց վրայ . անով բաները անանկ դարձուց՝ որ ան երկու անմեղներուն չարչարանքը դադրեցաւ : Երանեակին դաւերներուն մէկը անանկ հիւանդացաւ , որ քիչ մնաց պիտի մեռնէր : Թագաւորը ուզեց որ թագուհին ու Մարիամը հոգ տանին տղուն վրայ : Մոռցաւ իրենց դէմ ունեցած ատելութիւնը , ու հրաման ալ տուաւ որ դան իրեն երևնան : Եւ որովհետեւ ինքը ստէպ կ'երթար տղան տեսնալու , չիկրցաւ բռնել ինքզինքը որ թագուհւոյն հետ

ամենևին չիխօսէր . զարմացաւ ալ
անոր անփութիտիս հաւատարմու-
թեանը վրայ : Մայր մը ինչ պարտք
որ ունի իր զակին վրայ՝ ընելէն
ետքը , էրկանն ալ պէտք եղած պա-
տիւն ու պատկառանքը ընելէն չի-
պակսեցաւ : Ոչ երբէք բերնէն էր-
կանը սիրտը ծակելու խօսք մը ե-
լաւ : Թագաւորը տեսնելով թաղու-
հւոյն առաքինութիւնը՝ խելքը գլու-
խը ժողվեց , ու մտմըտուքը առաւ-
մէկ կողմանէ ալ , իր մէկ հատիկ
տղան կորսունցընելու վախը ա-
նանկ տակնուվրայ ըրաւ սիրտը ,
որ անմխիթար տրումութեան մէջ
ընկղմեցաւ :

Թագուհին ալ աւելի հոգ տարաւ
ղինքը մխիթարելու , ու այնչափ
քաջալերելու անուշ խօսքեր զուր-
ցեց՝ որ թագաւորին բարկութեան
կրակը բոլորովին մարեցաւ :

Քաղքին երևելի բժիշկները կան-
չուեցան , խորհուրդ ըրին թագա-
ւորին առջևը , զանազան դեղեր ու-
րոշեցին , և ոչ մէկը օգուտ ըրաւ ,

և տղան մեռնելու վրայ էր : Շատ
չանցաւ բժիշկները ձեռքերնին քա-
չեցին , ըսին թէ քանի մը ժամէն
ետքը տղան կը մեռնի , ու ելան
դացին :

Թագաւորը որ ամենեին մեռել
տեսած չունէր , փակուեցաւ իր պա-
լատը ու սկսաւ լալ ու ողբալ . տը-
ղուն քով Երանեակէն ու Մարիա-
մէն ուրիշ մարդ չիկար : Երկուքն
ալ տղուն հոգւոյն փրկութիւնը
կ'ուզէին : « Սիրելի Մարիամ , դար-
ձաւ ըսաւ թագուհին իր բարեկա-
մին , դուն որ զիս արժանի ըրիր
մկրտութեան սուրբ խորհրդոյն ,
խեղճ անմեղ տղան պիտի մեռնի ,
ասիկայ ալ շուտ մը մկրտէ , ար-
քայութեան որդի ընենք . ասան-
կով Աստուծոյ առջև բարեխօս մըն
ալ աւելի կ'ունենանք » :

Մարիամ ծունկ չոքեցաւ , քիչ
մը մտածեց , յանձնեց մկրտուելու
տղան Աստուծոյ . ետքը ելաւ ա-
ռաւ ջուրը մկրտեց , ու տղան մէ-
կէն 'ի մէկ առողջացաւ : Երեսը

դոյն եկաւ , աչուրները բացաւ , ըս-
կըսաւ ծիծաղիլ ու խնտալ : Աս
Աստուծոյ հրաշքին վրայ դարմա-
ցած , մէկէն երկուքն ալ դետին ին-
կան , Երանեակը տղան զիրկը ա-
ռած՝ աչքերը արցունքով լեցուն ,
փառք տուաւ , շնորհակալ եղաւ
Աստուծոյ ասանկ անկարծելի ու
դորմութեանը վրայ : Չէին զիտեր
թէ ինչպէս հասկըցընեն իրարու ի-
րենց դարմանքն և ուրախութիւնը :
Նոյն ատեն տղուն լեզուն ալ բա-
ցուեցաւ , սկսաւ հայրիկ , մայրիկ
կանչել :

Թագուհին անպատմելի ուրա-
խութեամբ լեցուած՝ Մարիամին ը-
սաւ . « Պէտք է մէկէն երթանք ի-
մացընենք Թագաւորին՝ Աստուծոյ
մեզի ըրած բարիքը » : Այնչափ
սաստիկ էր Թագուհւոյն ուրախու-
թիւնն՝ որ տղուն սովորական զգես-
տը հագցընելու ալ մոռցաւ , ու շուտ
մը մկրտութեան ճերմակ զգեստու-
վը առաւ տարաւ Թագաւորին :

Անիկայ տղուն կայտառութիւ-

նը, դուարթութիւնը, անողջութիւնը տեսածին պէս հասկըցաւ որ ընտացեր է, ամիշեցաւ մնաց, ու վրան նայելէն չէր կշտանար. երբոր երկընցուց ձեռուրները տղան մօրը զիրկէն առնելու համար, ան ատեն թագուհին ինքզինքը ուրախութենէն մոռցածի պէս՝ դարձաւ ըսաւ թագաւորին.

« Քրիստոնէից մկրտութիւնն է որ աս քու սիրելի դաւակղ ընտացուց. աս մեր Մարիամին բարեգործութիւնն է՝ որ իմ աղաչանքովս մկրտեց զինքը: Քրիստոսի ամենակարող գորութիւնը խալըսեց աս տղան մահուան դռնէն, որ իր հօրը մէկ հատիկ ուրախութիւնն է. տես ուրեմն ո՞վ թագաւոր, թէ ինչպէս կրնամ ես թողուլ ասանկ սուրբ հաւատք մը »:

Թագաւորին երեսին գոյնը նետեց, ու չէր զիտեր թէ ինչ զուրցէ: Տղան շարունակ հայրիկ մայրիկ ըսելու հետ էր. ու աս անմեղ տղուն դուրցած խօսքերը անանկ

աղղեցին թագաւորին սրտին , որ
իրր թէ կ'ուզէր ըսել , թէ հայրս
մայրս պէտք է հաշտուին մէկմէկու
հետ . մայրս իրաւունք ունի առանկ
սուրբ ու զեղեցիկ կրօնքի մը հաւ
տալու . աս հրաշքը քրիստոնէից
հաւատքին իրաւ ըլլալուն նշանն է :

Ասոնք տեսնելով ալ չիղիմացաւ
թագաւորին սիրտը , սկսաւ լալ .
ուրք ելաւ հաշտուեցաւ թագուհոյն
հետ . նոյն ատենը մէկէն հանեց
տուաւ իրեն առջի պատիւները .
խոստացաւ որ իրենց ալ չիղպչի ,
թող տայ որ համարձակ պաշտեն
քրիստոնէից Աստուածը : Նոյնպէս
Մարիամին ալ դարձուց իրեն պա
տիւները . ու հրաման տուաւ՝ որ
ուզածին չափ քրիստոնէութիւնը
քարոզէ . ուրիշ քրիստոնեայ պա
շտականներն ալ ազատ ըլլան ,
մէկը իրենց չիղպչի :

Երբոր քաղքին մէջ աս հրաշքին
ձայնը ու թագաւորին իր կնկանը
հետ հաշտուիլը տարածուեցաւ ,
սկսան ըսել ամէնքը՝ թէ « Ի՛նչ մեծ

Աստուած է քրիստոնէից Աստուածը, որ մեր աստուածներուն չիկըրցած բանը ինքն կ'ընէ » : Ամենէն աւելի ուրախացան քրիստոնեաները, ու աւելի սիրտ առին իրենց սուրբ Հաւատքին վրայ ամուր կենալու :

ժ

Հաշտար ոչ բարեգործութիւն :

Անպատմելի էր անկէց ետքը
թագուհոյն ու Մարիամին ուրա-
թիւնը . ինչու որ աս Աստուծմէ ա-
ռած շնորհքնին՝ չէ թէ միայն իրենց
համար էր , հապա նաև ուրիշ քը-
րիստոնեաներուն , որ համարձա
կրնային պահել Աստուծոյ պա-
տուիրանքները : Աստի յարգորուե-
ցան որ օրուան վրայ աւելի աղէկ
ու կատարեալ քրիստոնէ ըլլալու ,
և առաքինութեան ճամբուն մէջ ա-
ռաջ երթալու :

Մարիամ ուղածին չափ կրնար
քարոզչին քովն երթալ , ու գրեթէ

քովէն չէր բաժնուէր : Պալատը
դառնալուն պէս ալ բոլոր լսածնե-
րը թագուհւոյն մէկիկ մէկիկ կը
պատմէր : Շատ անգամ երկուքնին
զլուխ զլխու տուած՝ կը նստէին ա-
ղօթք կ'ընէին :

Ամէն բանէն աւելի Յիսուսի
չարչարանքը ու մահը քանի որ կը
մտածէին , սրտերնին ուժ ու անունդ
կ'առնէր :

Աստուածածնայ և սուրբերուն ալ
ըրած ջերմեռանդութիւննին շատ
սքանչելի բաներ էին :

Երանեակը քարոզչին խորհրդո-
վը սկսաւ արտաքին ապաշխարու-
թիւններ ալ ընել . միաքը զրած էր
որ խաչելեալ Յիսուսին սիրոյն հա-
մար անանկ բաներ քաշելը իրեն
պարտքն է . իրեն մտար նէ ալ աւե-
լի մեծ խսաութիւններ կ'ընէր . բայց
քարոզիչը կը չափաւորէր անոր ե-
ռանդը :

Թագաւորը տեսնալով իր թագու-
հւոյն առաքինութիւնները ու տղոց
վրայ ցըցուցած խնամքը՝ կ'ուրա-

խանար : Իսկ թագուհին դրսի կըրթութեան կողմանէ տղոց ամէն բանին վրայ բոլոր սրտանց աչք ունենալէն զատ՝ մասնաւոր կերպով կը ջանար իրենց սիրտը կրթել, միտքը լուսաւորել, կիրքերնին սանձել, առաքինութեան համը առնել տալ : Շատ անգամ ալ Քրիստոսի վրայ կը խօսէր իրենց, ու աղօթք և քրիստոնէական վարդապետութիւն կը սորվեցընէր. մէկ խօսքով անանկ ըրաւ որ պղտիկուց վարժեցան բարեպաշտութեան :

Առաքինի Մարիամն ալ թագուհւոյն կ'օգնէր ամէն բանի մէջ, ու տղաքը կը կրթէր : Բայց թագուհին իր տղոցը պէս կը հոգար նաև բոլոր իր հպատակները, մանաւանդ անոնք որ քրիստոնեայ եղեր էին : Իր մէկ հատիկ դբօսանքն էր որբերուն ու որբևարիներուն այցելութիւն ընել, մխիթարել, օգնել, կարօտութիւննին հոգալ : Անոնց տղոցը հազուատներ ալ կը շինէր, ու մէկուն մէկալին կը բաժնէր. ու

կը խրատէր, որ օրերնին առանց մեղաց անցընեն :

Շատ երևելի հարուստ խաթուններ իրեն բարեգործութեանը հետևեցան . անանկ որ քիչ ատենի մէջ, քաղքին փողոցներուն մէջ մուրացկան չիմնաց :

Իսկ սուրբ քարոզիչը թէպէտ կ'ուրախանար, բայց ամեննին չէր հպարտանար՝ որ Աստուած իր ձեռքովը ասանկ բարիք ըրաւ ան երկրին : Շատ անգամ կը յորդորէր զՄարիամն որ հոգևոր ընթերցմունք ընելը ամեննին ձեռքէ չիձգէ . բայց ճաբոնի լեզուով զիրք չիզըտնուելուն, քարոզչին առ փափաքը չէր կրնար կատարուիլ : Աս բանիս վրայ խօսեցաւ Մարիամ թագուհւոյն հետ, անիկայ ալ իր էրկանը հաւանութեամբը ետեէ եղաւ սորվեցաւ Ղատին ու Բորգուզալի լեզուն, որ ետքը հաւատոյ ամենէն հարկաւոր զրքերը թարգմանէ : Աս բանս որչափ որ դժուար էր նէ՛ Յիսուսի հաւատքը տարածելու սէրը

մտօցրնել տուաւ ան դժուարութիւնը , թագուհին ալ մեծ քաջութեամբ ետևէ եղաւ :

Քարոզիչը Բորգուզալէն հետը բերած զրքերը անոր տուաւ : Սուրբ զրքէն ետքը թագուհին կը սիրէր կարդալ Թովմա Գեմբացին : Քանի մը թուղթ կարդալէն ետքը , շատ անգամ կը դառնար կ'ըսէր . « Աս զրքիս մէջ ամէն մարդ իրեն պէտք եղած խրատները կը գտնէ . ան , ի՛նչ հանգստութիւն է որ կու տայ մարդու սրտին , ի՛նչ ուրախութիւն կ'իմանայ մարդ իր հոգւոյն մէջ , ի՛նչ սիրուն առաքինութիւններ կը սորվեցընէ մարդու , ի՛նչ վարպետ կերպով մարդու սիրտը աշխարհէս կը հեռացընէ ու կ'անէ ինչուան առ Աստուած կը հանէ : Աս զիրքը դարմանալի կերպով կը մխիթարէ , կը յափշտակէ , ու Աստուծոյ սէրը կը բորբոքէ մարդու սրտին մէջ : Քրիստոնէն ասոր խօսքերուն կը դմայլի , բայց հեթանոսն , ալ առանց օգուտ մը քաղելու չի կարդար » :

Ի՛նչ մեծ ուրախութեամբ կը կար-
դար թագուհին ուրիշ գրքերն ալ՝
որ Քրիստոսի չարչարանաց վրայ
կը խօսէին : Օր մը քանի մը քանի
վրայ մտածելու ատեն , դարձաւ ը-
սաւ Մարիամին . « Աս գրքերը մեծ
մխիթարանք են իմ սրտիս . կարծես
թէ կարդալու ատենս ես ալ Քրիս-
տոսի քաջած չարչարանքները կը
քաշեմ . բայց ետքը մէկէն 'ի մէկ
անուշ դուարթութիւն մը կու գայ
վրաս ու սիրտս կը բացուի » :

Մեր սուրբ գրոց անունը Գեղա-
րան հոգւոյ գրեր էր . վասն զի ա-
նոր մէջ իր հոգւոյն ամէն պէտք
եղած դեղը կը գտնէր : Թէ որ տեղ
մը խօսք մը չի հառկընար՝ մէկէն կը
հարցընէր քարոզչին : Խել մը խօս-
քեր ալ բերնուց սորվեցաւ՝ իր օգ-
տին և ուրիշին օգտին համար :

Ալ չեմ կրնար պատմել թէ Երա-
նեակը որչափ փոյթ ու ջանք ըրաւ
Թանկոյին մէջ քրիստոնէութիւնը
տարածելու : Տասուերկու տարի
միակերպ բոլոր հոգւով աշխատե-

ցաւ ճշմարտութիւնը սորվեցընե-
լու : Քանի անգամ , քանի քանի
մարդիկ որ մահապարտ էին , իր
զթութեամբն ու միջնորդութեամ-
բը թաղաւորին բարկութենէն ա-
զատեց : Իր մեծութիւնը ուրիշնե-
րուն բարիք ընելու դործածեց . ու
անանկ խելքով , ու անուշութեամբ
վարուեցաւ ամենուն հետ , որ թըշ-
նամի չունենալէն դատ , անթիւ
մարդիկ ալ իրեն բարի օրինակին
հետևեցան : Աստուծոյ տուած շը-
նորհքը միշտ աղէկի բանեցընելով ,
ամէն բանէ իրեն առաքինութիւն
չահելու վարձք վաստրկելու կ'աշ-
խատէր : Բոլոր իր կեանքը մեծու-
թեան ու փափկութեան մէջ ան-
ցուց , բայց սրտով իրեն պէս աղ-
քատ ու խոնարհ չիկար :

ԺԱ.

Մարտիրոսացիքն :

Երբոր թագուհին ամէն բան
մոռցած՝ միայն իր հոգւոյն և ուրիշ
ներուն փրկութեանը ետևէ կ'ըլլար,
մէյ մըն ալ յանկարծ մեծ խռովու-
թիւն մը ելաւ ճաբոնի մէջ: Թա-
գաւորը վախնալով՝ որ չըլլայ թէ իր
թագուհւոյն դիտուն փորձանք մը
դայ, (ինչու որ դիտէր թէ անոր
քրիստոնեայ ըլլալուն համար մե-
ծամեծներուն շատը իրմէ ալ պա-
ղեր էին), անոր համար խրկեց
դիները շուտ մը Օջաբա ըսուած բեր-
դը. ինքն ալ առաւ իր զօրքը՝ ու
դնաց ապստամբները նուաճելու:
Ամէն փորձանքէ ազատ պահելու

համար , ուղեց որ մինակ թագու-
հին ան բերդը երթայ առանց հետն
առնելու տղաքն ու Մարիամը :

Կարդացողները թող մտածեն
թագուհւոյն սրտին ցաւը որ ունե-
ցաւ իր սիրելի զակերներէն ու Մա-
րիամէն բաժնուելու ատենը . ինչ
ողբ , ինչ լաց եղաւ երկու կողմէն
նէ , ես չեմ կրնար պատմել : Տղա-
քը խօսք տուին իրեն , թէ ինչ որ ի-
րենց սորվեցուցեր է՝ հաստատ պա-
հեն . ու հաւատքներնուն վրայ պէտք
ըլլայ նէ՝ պատրաստ են սիրով ա-
րիւննին թափելու : Թագուհին ալ
օրհնեց զիրենք . յանձնեց Սատու-
ծոյ ու Սատուածածնայ պաշտպա-
նութեանը , ու իր սրտին ցաւերը
խաչելութեան առջևը զուրցելէն
ետքը՝ տրտում ախուր բաժնուեցաւ
անոնցմէ զնաց Օչաքա բերդը :

Հազիւ թէ օտքը բերդէն ներս
դրաւ , ապստամբները շատ յաղ-
թութիւններ ըրած՝ եկան պաշարե-
ցին թագուհւոյն կեցած բերդը :
Բերդապահը որ թագաւորին հա-

ատարիմ պաշտօնեաներէն մէկն էր, շատ ջանք ըրաւ թշնամեաց յաղթելու, բայց դժբաղդութեամբ թշնամիները իր հնարքները պարապ հանելէն ետքը՝ բերդին ալ տիրեցին: Երբոր բոլոր քաղաքին մէջ վախը տիրեց, թշնամիներուն ըրած յաղթութեան՝ ուրախութեան ձայները թագուհին ալ սկսաւ լսել. մէյ մըն ալ յանկարծ ներս մտաւ բերդապահը երեսին գոյնը նետած ու տրտմած: « Ո՛վ թագուհի, բաներնիս դէշ է, ըսաւ, թշնամիները բերդիս տիրեցին ու բազմութեամբ պալատէն ներս կը վազեն, դքեղ Աստուծոյ գոհ կ'ուզեն ընել: Ես ձեռքէս եկածը ըրի դքեղ խալըսելու համար, բայց ի՞նչ շահ, որ մէն ջանքս պարապ ելաւ: Թագաւորը զիտէ եղեր աս բանս որ հեռացուց դքեղ պալատէն, որ չիտեսնաս ան դարհուրելի հանդէսը՝ որով թշնամիք քու տղաքդ իրենց հաւատքէն չիղառնալուն համար կտոր կտոր ըրին. ատ է եղեր դքեղ աս

բերողը խրկելուն պատճառը . ինքն
աս ալ ապսպրեց ինձի որ »
Աս տեղս խեղճ մարդուն լեզուն
վախէն ու սրտին ցաւէն կապուե-
ցաւ , և չիկրցաւ իր խօսքը առաջ
տանիլ :

Թագուհին անուշութեամբ թևէն
բռնեց վեր վերցուց , ու առանց
այլայլելու հրամայեց որ խօսքը ա-
ռաջ տանի լմնցընէ :

« Արովհետև հրամանքդ ասանկ
կ'ուզես , ով թագուհի , կը հնա-
զանդիմ քեզի , ըսաւ : Թագաւորը
ապսպրեց ինձի որ իր թշնամիներ
ուն դադանական կատաղութենէն
դքեզ խալըսեմ : Ինքը աղէկ կը
ճանչնայ դքեզ , և դիտէ իր վրայ ու-
նեցած սէրդ . բայց վախնալով որ
չըլլայ թէ յանկարծ բարբարոսները
քու հաւատքիդ վրայ հաստատ կե-
նալուդ համար մնաս մ'ընեն քեզի՝
ապսպրեց որ ես . . . — Հասկըցայ ,
ըսաւ թագուհին , կ'ուզես ըսել թէ
իմ էրիկս կ'ուզէ որ մեռնիմ՝ քան
թէ անզուժ բարբարոսներուն ձեռ-

քը իյնամ . իմ ուղածս ալ ան է :
Մահը զիս շիկրնար վախցընել . քա-
նի մը տարի առաջ եմ մեռեր՝ քանի
մը տարի ետքը , հոգս չէ : Ես պատ-
րաստ եմ ամէն բան քաշելու . ու
չնորհակալ կ'ըլլամ էրկանս՝ որ ին-
ծի պատճառ կ'ըլլայ Քրիստոսի հա-
մար մեռնելու : Ա՛հ , երանի՛ ինծի :
Որո՞ւն մտքէն անցեր էր որ Աս-
տուած զիս աս շնորհքիս ալ արժա-
նի ընէ , որ իրեն սորվեցուցած
սուրբ հաւատքին համար մեռնիմ .
աշխարհքիս վրայ ասկէ մեծ ուրա-
խութիւն մարդ կրնայ ունենալ : Ա՛վ
երկնաւոր փեսայ և տէր իմ Յիսուս ,
եկու առ ընդունէ իմ հոգիս որ ահա
քեզի պատրաստ զոհ կեցեր է : Քե-
զի համար մեռնիլը իմ սրտիս մէկ
հատիկ ուրախութիւնն է . զքեզ
յաւիտեանս յաւիտենից գալ ժա-
ռանդելը իմ մէկ հատիկ երջանկու-
թիւնս է : Բոլոր սրտովս թողու-
թիւն կու տամ էրկանս՝ և անոնց որ
ուզեր են ինծի վնաս մը հասցընել :
Կ'աղաչեմ քեզի , որ դուն ալ ինծի

ներես : Տուր քու սուրբ շնորհքդ
իմ թագաւորիս ալ՝ որ գրեզ ճանչ-
նայ , ու քեզի մինակ երկրպագու
թիւն ընէ : Օգնէ անոնց որ քրիստո-
նէ եղան . պահէ ամէն փորձանքէ
բարեպաշտ Մարիամը , որ մօր պէս
հոգ տանի իմ զակրներուս վրայ
ու հաստատ մնան քրիստոնէու-
թեան մէջ » :

Բարեպաշտ թագուհին քիչ մը ա-
տեն լուռ կեցաւ , ու արցունքները
անձրևի պէս հրեշտակային երեսէն
վար կը վազէին . ետքը ձեռքը եր-
կրնցուց ու ըսաւ բերդապահ իշխա-
նին . « Դուն որ քու մարմնաւոր
թագաւորիդ համար այսչափ աշխա-
տեցար , մեղք չէ՞ քեզի որ կու-
պաշտութեան մէջ մեռնիս : Ափսոս
չէ՞ քեզի պէս խելացի մարդուն՝ որ
չիճանչնաս քարէ փայտէ կուռքե-
րուն ստութիւնը : Հիմայ դուն ալ՝ի
հարկէ պիտի մեռնիս ան արիւն-
կզակ բարբարոսներուն ձեռքէն :
Ես քու փրկութիւնդ կ'ուզեմ . ե-
կուր գրեզ մկրտեմ . հաւատա՛ Քր-

րիատոսի մեր փրկչին , այսչափս
հիմակու հիմայ ճանչնալդ բաւական
է քեզի համար , մնացածը արքայ-
ութեան մէջ կ'իմանաս : Փափաքէ ,
սիրելի , մկրտութեան փափաքէ ,
զղջա մեղքերուդ վրայ , խոնարհէ
ճշմարիտ Աստուծոյ առջև , և ա-
հա կը փրկուիս , ու քեզի հետ
մէյտեղ կ'երթանք կը դռնենք մեր
Աստուածը » :

Բերդապահը լուսաւորուեցաւ Աս-
տուծոյ ան շնորհքովը որ Սողոմը
Պողոս առաքեալ ըրաւ . ծունկ չու-
քեցաւ , վերցուց ձեռքերը դէպ 'ի
երկինք՝ թողութիւն խնդրեց իր մեղ-
քերուն , ու բոլոր սրտանց ուզեց
մկրտուիլ . ան միջոցին թագուհին
ներս մտաւ որ ջուր բերէ . դարձաւ
թագուհին իր նաժիշտներուն հետ
ձեռքը աման մը առած , ու երեսը
բալորովին լուսաւորուած էր սքան-
չելի լուսով մը : Նշան ըրաւ աղա-
խիններուն որ ծունկ չոքին . ինքն
ալ ինչաւ խաչելութեան առջև ու
սկաւ զողորմալով ըսել . « Իմ սի-



րելի քոյրերս , ահա հասաւ ատենը ,
հաւատքի համար մարտիրոս ըլ-
լանք : Յիսուսի հաւատքին թշնա-
միները դուռը ձեռք առեր են .
կատղած զայլերը պիտի մանեն
անմեղ դառանց մէջ . թէ որ մա-
հուն վախը զմեզ կը խրտեցընէ
նէ , յաւիտենական երջանկութիւնը
պէտք է քաջալերէ զմեզ : Յիսուս
երկինքէն կեցեր կը նայի մեր մար-
տիրոսութեանը վրայ , ինչպէս ա-
տենով սրբոյն Ստեփանոսի . անոր
պէս հիմա ալ զմեզ կը քաջալերէ ,
անմահութեան պսակը ձեռքը բռն-
ած : Ա՛հ , սիրտ առնենք ուրեմն ,
հաւատքնիս զօրացընենք , մեր սէ-
րը բորբոքենք : Դուք , սիրելի քոյ-
րերս , դուք բախտաւոր գտուեցաք
որ սուրբ մկրտութեան խորհրդին
արժանի եղած էք . բայց ահա մեր
եղբայրներէն մէկը որ ինչուան աս-
օրս տղիտութեան խաւարին մէջ
մոլորած կը քալէր , ինքն ալ կ'ուզէ
դառնալ հաւատալ Բրիտանի . հի-
մա ես կը մկրտեմ զինքը . ուրիշը
ըրէք ինձի հետ :




Ետքը ջերմեռանդ կերպով մը նայեցաւ դէպ 'ի երկինք , « Ո՛վ Յիսուս , ըսաւ լալով , ընդունէ դմեղ մէյմէկ հաճոյական զոհի տեղ , որ քու սիրոյդ համար կը մեռնինք՝ քեզի կը նուիրենք մեր կեանքը , հաճոյ ըլլայ քեզի մեր մահը » : Ասոնք ըսելով ոտք ելաւ , դողդրղալով առաւ ջրին ամանը , մօտեցաւ իշխանին քովը , ու ջուրը դլխէն վար լեցուց ըսելով , « Ես Մկրտեմ գրեղ Յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ » :

Ան միջոցին սոսկալի աղաղակ մը բրդաւ պալատին մէջ , մէկէն 'ի մէկ անոնց կեցած տեղին դուռը բռնուածեամբ մը բացուեցաւ . բարբարոսները ջահերով դէնքերով ներս թափեցան , ու մէկ բերան կը կանչուրատէին « Թաղուհին կ'ուզենք , թաղուհին » : Ան ատեն թաղուհին աղնուական կերպով մը դիմացնին ելաւ . « Ահա հոս եմ , ըսաւ , դի՛ս կ'ուզէք , ահա կեցեր եմ դարկէք , Աստուած ձեզի թողութիւն

տայ » , ու սուրբ զլուխը զլորեցաւ
ինկաւ անդութ կռատաշտներուն
ուրբին տակ : Անով դադանները կա-
տաղի յաղթութիւն մը ըրածի պէս
ուրախութեամբ տեղերնին դար-
ձան :

Արքայութեան սուրբերուն թիւը
աւելցաւ , աշխարհս ալ ասանկով
դրկուեցաւ քանի մը առաքինի
սուրբերէ :

Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Յ




Ա. Թագուհին ու իր սղալաարը	5
Բ. Փառաւոր դարձ	13
Գ. Ճշմարիտ բարեկամ	21
Դ. Մարիամ իշխանուհւոյն մկրտուիլը	27
Ե. Թագուհւոյն քրիստոնէ ըլ- լալը	32
Զ. Վեհանձնական դիտաւորու- թիւն	38
Է. Թագաւորին հասնիլը	44
Ը. Երկու բանտարկեալները	49
Թ. Հրաշալի բժշկութիւն	59
Ժ. Հաւատք ու բարեգործու- թիւն	66
ԺԱ. Մարտիրոսութիւն	73

[Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.]

1	...
2	...
3	...
4	...
5	...
6	...
7	...
8	...
9	...
10	...
11	...
12	...
13	...
14	...
15	...
16	...
17	...
18	...
19	...
20	...
21	...
22	...
23	...
24	...
25	...
26	...
27	...
28	...
29	...
30	...
31	...
32	...
33	...
34	...
35	...
36	...
37	...
38	...
39	...
40	...
41	...
42	...
43	...
44	...
45	...
46	...
47	...
48	...
49	...
50	...
51	...
52	...
53	...
54	...
55	...
56	...
57	...
58	...
59	...
60	...
61	...
62	...
63	...
64	...
65	...
66	...
67	...
68	...
69	...
70	...
71	...
72	...
73	...
74	...
75	...
76	...
77	...
78	...
79	...
80	...
81	...
82	...
83	...
84	...
85	...
86	...
87	...
88	...
89	...
90	...
91	...
92	...
93	...
94	...
95	...
96	...
97	...
98	...
99	...
100	...

24713

20



24713